ԱՎԴ4/0051/01/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 հունվարի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հունվարի 13-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի նոյեմբերի 2-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 58229821

(ԱՎԴ4/0051/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Խաժակ Սամվելի Թովմասյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով և Հարություն Առաքելի Մուրադյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով:

2021 թվականի նոյեմբերի 8-ին թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական գործն ընդունվել է դատավոր Գ.Ստեփանյանի վարույթ և 2021 թվականի նոյեմբերի 12-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

1.1. 2024 թվականի ապրիլի 15-ին թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Բ.Բախշիյանին և 2024 թվականի ապրիլի 23-ին որոշում է կայացվել քրեական գործի վարույթն ստանձնելու, այն նորից սկսելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. 2024 թվականի հուլիսի 11-ին թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Հ.Պետրոսյանին և 2024 թվականի հուլիսի 15-ին ընդունվել է վարույթ:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հուլիսի 25-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական գործի քննությունը վերսկսելու և դատական նիստ նշանակելու մասին:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

4. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունվարի 13-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունվարի 17-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Խաժակ Սամվելի Թովմասյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա փորձել է Հարություն Մուրադյանի օժանդակությամբ առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով՝ 293,23 գրամ քաշով հաշիշ տեսակի թմրամիջոցներ:*

Այսպես.

Հրազդան քաղաքի բնակիչ Խաժակ Թովմասյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու, փոխադրելու և պահելու թույլտվություն, առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ձեռք բերելու դիտավորությամբ 2021 թվականի հունիսի 21-ին տաքսու վարորդ Հարություն Մուրադյանին պատվիրել է «ՎԱԶ 2115» մակնիշի, 35 NX 838 համարանիշի ավտոմեքենայով մեկնել հայ-իրանական սահմանի մոտ, ստանալ իր ծանոթ պարսիկ Ֆիրուզ Ղաֆֆարիի կազմակերպմամբ Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգությամբ Հայաստանի Հանրապետություն ներկրվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցները, դրանք փոխադրել Հրազդան քաղաք և հանձնել իրեն: Նույն օրը Հարություն Մուրադյանը նշված ավտոմեքենայով մեկնել է Սյունիքի մարզ՝ Խաժակ Թովմասյանի տված հեռախոսահամարով կապ պահելով և թմրամիջոցի փոխանցման վերաբերյալ անհրաժեշտ պայմանավորվածություններ ձեռք բերելով հայ-իրանական սահմանի հարևանությամբ՝ իրանական կողմում գտնվող Ֆիրուզ Ղաֆֆարիի հետ:

Այնուհետ՝ 2021 թվականի հունիսի 22-ին՝ ժամը 7:00-ի սահմաններում, Հարություն Մուրադյանը հայ-իրանական սահմանի՝ Սյունիքի մարզի Ագարակ բնակավայրին հարող տարածքում քննությամբ չպարզված և Ֆիրուզ Ղաֆֆարիի կազմակերպմամբ ՀՀ պահպանվող պետական սահմանն իրանական կողմից Արաքս

գետն անցնելով ապօրինի հատած անձից սահմանին գտնվող փշալարերի մյուս կողմից ստացել է մաքսանենգությամբ ՀՀ տեղափոխված առանձնապես խոշոր չափերով՝ 449,73 գրամ քաշով մարիխուանա և առանձնապես խոշոր չափերով՝ 293,23 գրամ քաշով հաշիշ տեսակի թմրամիջոցներով փաթեթը: Դրանից անմիջապես հետո Հարություն Մուրադյանը թմրամիջոցները Խաժակ Թովմասյանին հանձնելու նպատակով ուղևորվել է Հրազդան քաղաք, սակայն վերջինս իր կամքից անկախ հանգամանքներով առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի ձեռք բերումն ավարտին չի հասցրել, քանի որ օժանդակող Հարություն Մուրադյանի գործողությունները չեն հաջողվել, և նա Եղեգնաձոր քաղաքում բռնվել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից, ինչի արդյունքում նշված ավտոմեքենայի բեռնախցիկում հայտնաբերվել ու վերցվել են առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցները: (…)»[1]:

6.1. Հարություն Առաքելի Մուրադյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 3-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա փորձել է օժանդակել Խաժակ Թովմասյանի կողմից առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով՝ 293,23 գրամ քաշով հաշիշ տեսակի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելուն:*

Այսպես.

Հրազդան քաղաքի բնակիչ Խաժակ Թովմասյանն առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ձեռք բերելու համար իր ծանոթ պարսիկ Ֆիրուզ Ղաֆֆարիի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2021 թվականի հունիսի 21-ին տաքսու վարորդ Հարություն Մուրադյանին պատվիրել է գումարի դիմաց «ՎԱԶ 2115» մակնիշի, 35NX838 համարանիշի ավտոմեքենայով մեկնել հայ-իրանական սահմանի մոտ, ստանալ Ֆիրուզ Ղաֆֆարիի կազմակերպմամբ Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգությամբ Հայաստանի Հանրապետություն ներկրվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցները, դրանք փոխադրել Հրազդան քաղաք և հանձնել իրեն:

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 5, թերթեր 239-240:

Հարություն Մուրադյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու, փոխադրելու և պահելու թույլտվություն, իր ծանոթ Խաժակ Թովմասյանի կողմից առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ձեռք բերելուն օժանդակելու դիտավորությամբ, շահույթ ստանալու շարժառիթով նույն օրը նշված ավտոմեքենայով մեկնել է Սյունիքի մարզ՝ Խաժակ Թովմասյանի տված հեռախոսահամարով կապ պահելով և թմրամիջոցի փոխանցման վերաբերյալ անհրաժեշտ պայմանավորվածություններ ձեռք բերելով հայ-իրանական սահմանի հարևանությամբ՝ իրանական կողմում գտնվող Ֆիրուզ Ղաֆֆարիի հետ:

Այնուհետ՝ 2021 թվականի հունիսի 22-ին՝ ժամը 7:00-ի սահմաններում, Հարություն Մուրադյանը հայ-իրանական սահմանի՝ Սյունիքի մարզի Ագարակ բնակավայրին հարող տարածքում քննությամբ չպարզված և Ֆիրուզ Ղաֆֆարիի կազմակերպմամբ ՀՀ պահպանվող պետական սահմանն իրանական կողմից Արաքս գետն անցնելով ապօրինի հատած անձից սահմանին գտնվող փշալարերի մյուս կողմից ստացել է մաքսանենգությամբ ՀՀ տեղափոխված առանձնապես խոշոր չափերով՝ 449,73 գրամ քաշով մարիխուանա և առանձնապես խոշոր չափերով՝ 293,23 գրամ քաշով հաշիշ տեսակի թմրամիջոցներով փաթեթ, որից անմիջապես հետո ուղևորվել է Հրազդան քաղաք, որպիսի պլանավորված գործողություններով՝ հանցագործության առարկան ձեռք բերելու համար իր տրանսպորտային միջոցը տրամադրելով, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքից Սյունիքի մարզ մեկնելով, հայ-իրանական սահմանից թմրամիջոցը ստանալով և Հրազդան քաղաք փոխադրելու եղանակով հանցագործության կատարման համար խոչընդոտները վերացնելով, փորձել է օժանդակել Խաժակ Թովմասյանի կողմից առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ Եղեգնաձոր քաղաքում բռնվել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների

կողմից, ինչի արդյունքում նշված ավտոմեքենայի բեռնախցիկում հայտնաբերվել ու վերցվել են առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցները: (…)»[2]*:*

7. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն որոշման 11-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքն ունի բացառիկ նշանակություն անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանն է, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու (locus standi) և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը: Հետևաբար դատարանի մատչելիության իրավունքի իրացմանն առնչվող դատավարական կարգավորումները դատարանների կողմից պետք է ճկուն մեկնաբանման ենթարկվեն՝ ելնելով դատարանի մատչելիության իրավունքի գերակայությունից՝ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգային առանձնահատկությունների նկատմամբ:*

(…) Դատական մատչելիության իրավունքի հետ անմիջականորեն առնչվում է նաև գործերի պատշաճ ընդդատության հարցը, որի վերաբերյալ ընդհանուր բնույթի կարգավորումները նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ գլխում: (…)»:

Վերը շարադրված իրավադրույթների և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով սույն քրեական գործի փաստական հանգամանքները, քննարկելով դատական նիստի ընթացքում դատավարության մասնակիցների դիրքորոշումները՝ Դատարանը եզրահանգում է, որ սույն քրեական գործն անհրաժեշտ է ըստ տարածքային ընդդատության ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցներից երկու մեղադրյալները բնակվում են Կոտայքի մարզի Հրազդան

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 5, թերթեր 248-249:

քաղաքում, իսկ միակ վկան՝ Սաիդ Ռահիմարզարեն, բնակվում է Կոտայքի մարզին հարակից՝ Երևան քաղաքում, միևնույն ժամանակ առկա է մեղադրյալների համաձայնությունը՝ գործն ըստ ընդդատության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու կապակցությամբ:

Հետևաբար, Դատարանը եզրահանգում է, որ անհրաժեշտ է փոխել քրեական գործի տարածքային ընդդատությունը և այն ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին (…)»:

7.1 Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում կայացնելիս ղեկավարվել է ինչպես 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ և 50-րդ, այնպես էլ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 23-րդ, 33-րդ, 261-րդ, 263-րդ և 314-րդ հոդվածներով[3]:

8. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունվարի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համատեքստում դիտարկելով «Քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին» Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը, գտնում եմ, որ թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվել և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցվել չէր կարող, քանի որ որոշման կայացման պահին վարույթի մասնավոր մասնակիցներից միայն երկու մեղադրյալների բնակության վայրն է հանդիսացել Կոտայքի մարզը, իսկ վարույթի մասնավոր մասնակից բոլոր երեք պաշտպանները և վկան բնակվել են Երևան քաղաքում:*

Վերոգրյալի պայմաններում ակնհայտ է, որ «Քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին» Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 30-37:

որոշման կայացման պահին Կոտայքի մարզը հանդիսացել է միայն քրեական գործով մասնավոր մասնակից երկու մեղադրյալների բնակության վայրը, ինչը նշանակում է, որ Կոտայքի մարզը չէր կարող գնահատվել որպես վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բնակության վայր, իսկ թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական գործը չէր կարող ըստ տարածքային ընդդատության փոխանցվել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը:

Նախքան հիշյալ իրավական հարցին անդրադառնալը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, հաշվի առնելով, որ թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական վարույթը վերաբաշխվել է 2022 թվականի հուլիսի 1-ից հետո, արձանագրում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելիս կիրառելի են 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ընդդատության վերաբերյալ իրավակարգավորումները:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի*

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 41-43:

առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

14.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է **գործադրվել բացառիկ դեպքերում**, երբ **բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի** ընդդատությունը փոխելու՝ օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, այս նորմը պետք է մեկնաբանվի ընդդատության հիմնարար արժեքի իրավական նշանակությանը համապատասխան, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության և հիմք հանդիսանա առերևույթ կամայականության համար:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- մեղադրյալներ Խ.Թովմասյանը և Հ.Մուրադյանն իրենց համաձայնությունն են հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի և վարույթը փոխանցվի Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[8]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ մեղադրյալները բնակվում են Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, վկա Սահդ Ռահիբարզարեն բնակվում է Կոտայքի

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, դատական նիստի արձանագրություն, թերթեր 28-29/1:

մարզին հարակից՝ Երևան քաղաքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալներն իրենց համաձայնությունն են հայտնել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[9]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ արձանագրելով, որ մեղադրյալների բնակության վայրը՝ Կոտայքի մարզն է, իսկ երեք պաշտպանների և վկայի բնակության վայրը՝ Երևան քաղաքը, հետևաբար Կոտայքի մարզը չէր կարող գնահատվել որպես վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բնակության վայր[10]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերը վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալներ Խ.Թովմասյանի և Հ.Մուրադյանի բնակության վայրն է Կոտայքի մարզը, վկա Ս.Ռահիբարզարեի բնակության[11] և պաշտպաններ Վ.Հովհաննիսյանի, Վ.Գևորգյանի և Ս.Խչեյանի գործունեության վայրն է Երևան քաղաքը[12]: Այլ կերպ, վարույթին ներգրավված են թվով վեց մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից միայն երկուսն են բնակվում Կոտայքի մարզում: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր

---

[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթ 291:
[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 14 և 15:

մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ4/0051/01/21 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ